ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ

ՄԱՄՆԱՃՅՈՒՂ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ <<Ուսուցչի համագործակցությունը սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում>>

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու և գրականություն

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Թաիրյան Սիրանուշ Աշոտի

ԽՄԲԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ՝

Մ.գ.թ. Սարգսյան Ասյա Արազբեկի

Իջևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Հետազոտության թեմայի արդիականությունը..... 3

Հետազոտության նպատակը 4

Հետազոտության խնդիրը 4

ԳԼՈՒԽ 1. ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ..4

1.1 Ծնողների ներգրավվածություն.....8

1.2 Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը.....9

1.3 Ի՞նչ է ծնողների ներգրավվածության արգելքը 9

ԳԼՈՒԽ 2. ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ.....10

ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 12

4.ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....16

5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակությունը կրթության կարևոր բաղադրիչներից է: Ժամանակակից դաստիարակության հիմնական խնդիրներն են՝ անհատի մոտ քաղաքացիական և իրավական պատասխանատության ձևավորումը, հոգևոր և մշակութային արժեքների գնահատումը, նախաձեռնության և ինքնուրույնության զարգացումը: Դաստիարակության համակարգը մարդու վրա ազդեցության գործընթացի էության սկզբունքների, մեթոդների, միջոցների և ձևերի միասնությունն է: Այդ գործընթացում իր ուրույն տեղն ունի ուսուցիչը, որի աշխատանքը գործողությունների մի համակարգ է, որի գլխավոր նպատակներից մեկը սովորողի դաստիարակությունն է: <<Դաստիարակություն բառին տարբեր իմաստներ են տալիս, բայց միշտ էլ դա ցույց է տալիս փոփոխություններ… Մենք չենք դաստիարակում որևէ մեկին, եթե նրանում փոփոխություններ չենք առաջացնում>>:

Յուրաքանչյուր երեխա ունի կրթության հիմնարար իրավունք, ինչն ամրագրում է ՀՀ օրենքով, միջազգային պայմանագրով և մի շարք օրենսդրական ակտերով: Գրական գործընթացի ճիշտ կազմակերպման կարևորագույն գործոններից մեկը՝ ծնողների, աշակերտների և մասնագետների միջև համագործակցությունն է: Երբ ընտանիքը և ուսումնական հաստատությունը աշխատում են համագործակցելով, երեխայի կարիքին համապատասխան միջավայրային հարմարացումների ապահովումն առավել հեշտ է դառնում, ինչի արդյունքում շահում է հենց երեխան: Հայտնի մանկավարժ Ջ. Դիլոնը ասել է. <<Երեխաները դպրոցը պետք է պատկերացնեն մի վայր, որտեղ նրանց ջանքերը հանգում են հաջողությունների և այդ հաջողությունները մեծանում են, երբ ծնողները և ուսուցիչները գտնվում են սերտ համագործակցության մեջ և պատրաստ են օգնել երեխային անհրաժեշտության դեպքում:

Հետազոտության թեմայի արդիականությունը

Սույն հետազոտության համար հիմք են հանդիսացել սովորողի կրթության և դաստիարակության իրավունքը և այդ իրավունքի իրացման ճանապարհին ծնող-ուսուցիչ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատումն այն համատեքստում, որ երկու կողմն էլ շահագրգիռ են, որ այդ իրավունքի իրացման գործընթացը լինի արգասաբեր հաղթանակներով լի: Սովորողի ծողի ու ուսուցչի միջին կառուցողական հարաբերությունների անհրաժեշտությունը իր դրական ազդեցությունն է բերում կրթադաստիարակչական գործընթացի իրականացման վրա:

Այստեղ է, որ առաջին պլան է մղվում ուսուցիչ-ծնող փոխհամագործակցությունը՝ միասնական ուժերով վատթարագույն տարաբնույթ երևույթները արմատախիլ անելու և գոնե, դրական անհրաժեշտ նվազագույնը սերմանելու նպատակով:

Հետազոտության նպատակը

Մեր հետազոտության հիմնական նպատակն է մատնանշել բոլոր այն եղանակները ու միջոցները, որոնք թույլ կտան ամրապնդել դպրոց-ծնող համագործակցությունը՝ նպատակ ունենալով նպաստել սովորողի ուսումնառության որակի բարձրացմանը: Կարևորել եռամիասնության դրական և շահավետ կապը հաստատության մշակութային կյանքի զարգացմանը: Բարենպաստ պայմաններ ստեղծել սովորողի լիարժեք սոցիալական զարգացման, դաստիարակության և կրթության համար:

Հետազոտության խնդիրը

Սահմանել այն եղանակներն ու ձևերը, որոնց շրջանակներում թույլատրելի է և անհրաժեշտ, որպեսզի ծնողն ու ուսուցիչը միմյանց փոխօգնելով ու փոխլրացնելով, նպաստեն, որ ուսումնական գործընթացում սովորողն ունենա գիտակցված մոտեցումներ, առաջադիմի, ունենա կրթական չափորոշիչների վերջնարդյունքներին համապատասխան գիտելիք, հմտություններ և կարողություններ: Հետազոտության խնդիրներից է.

1. Ինչպես ներգրավել ծնողներին միջին և հիմնական դպրոցներում ուսումնադաստիարակչական խնդիրների լուծման պրոցեսին:
2. Ինչպես ներգրավել ծնողներին իրենց երեխաների կրթությանը վերաբերող հարցերի մասին որոշումներ կայացնելու գործին:

3. Ինչ միջոցներ կիրառել այդ կապը միայն դրականորեն ընկալելու համար: Եվ ինչպես ասել է Վ.Գ. Բելինսկին <<Դաստիարակությունը մեծ գործ է. նրանով է վճռվում մարդու ճակատագիրը>>:

ԳԼՈՒԽ 1. ԾՆՈՂՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն ապացուցված է, որ դաստիարակությունը հաջողություն է ունենում, երբ ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Շատ հաճախ երեխայի դաստիարակության գործընթացն իրականացվում է այդ համագործակցությունից դուրս, որը, ցավոք, տխուր հետևանքներ

է ունենում: Դրա համար ուսուցիչը (դասղեկը) պետք է ծնողների հետ նախապատրաստական գործունեություն ծավալի, քանի որ այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ հիմնական աշխատանքի, հնարավոր չէ արդյունավետ աշխատել դասարանի հետ: Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ունի ավելի բարձր ակադեմիական առաջադիմություն, քննությունների և թեստերի ավելի լավ արդյունքներ: Այդ նույն ժամանակ բարելավվում է հաճախման ցուցանիշը, աշակերտի մոտ զարգանում են սոցիալական հմտությունները և նրա վարքը դրական է դառնում ինչպես տանը այնպես էլ դպրոցում:

Սրանք այն շատ կարևոր գործոններն են, որոնք ազդում են աշակերտի վրա ինչպես դպրոցում ուսանելիս, այնպես էլ ապագա մասնագիտական գործունեության ընթացքում:

Իրականում ինչ է նշանակում << ծնողների ներգրավվածություն>>:

Այս տերմինը նշանակում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավմանը ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Ծնողների ներգրավվածություն նշանակում է ծնողների մասնակցության կանոնավոր, բազմակողմանի կապերում, աշակերտի ուսման գործընթացում և դպրոցի այլևայլ միջոցառումներին: Այն ծնողների համար կարող է նախատեսել.

1. Դպրոցական միջոցառումներին հնարավորինս շատ մասնակցություն.
2. Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.
3. Դպրոցի համար ռեալ պայմանների նախանշում.
4. Ուսուցիչների հետ կանոնավոր հանդիպումներ և իրենց երեխաների առաջադիմության քննարկում .
5. Տնային աշխատանքներ կատարելիս աշակերտին օգնության ցուցաբերում:

Կարևոր է իմանալ, որ <<ծնող>> ասելով չպետք է հասկանալ միայն մայր կամ հայր: Ծնող կարող ենք անվանել այն բոլոր անձանց, ովքեր ներգրավված են երեխայի դաստիարակման գործում: Որպես օրենք, հայրն ու մայրը հոգում են երեխայի դաստիարակման և կրթության համար, սակայն նրանցից բացի հաճախ երեխայի դաստիարակման հարցում պատասխանատվություն են կրում տատիկը, պապիկը, մորաքույրը, հորաքույրը, հորեղբայրը, դայակը և այլն: Այսինքն մենք ու ծնող ասելով նկատի ունենք այն անձանց, որոնք պատասխանատու են երեխայի դաստիարակման և բարօրության համար:

Ծնողների ներգրավվածությունը դրական է անրադառնում նաև կրթական հաստատության վրա: Այն հարստացնում է դպրոցի մշակույթը և նպաստում է նրա

զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցությամբ:

Ստորև ներկայացնենք յուրաքանչյուր խմբի օգուտը.

Օգուտ աշակերտին

Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում այն բաներում ինչպիսին է ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

1.Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում , ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի:

2.Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, նրանց երեխաների առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է:

3.Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտները ավելի դրական են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի և հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն:

4.Այն աշատերտներն, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ:

5.Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաներն ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ:

6. Տարբեր մշակութային միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած մշակութային տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

Օգուտ ծնողին

Ծնողների հետ ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների, ուսման բարելավման , այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար: Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները:

Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը.

1.Ավելի է հասկանում սեփական երեխային:

2.Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին:

Դառնում է ավելի հոգատար, ավելի խիստ երեխայի հանդեպն ավելի շատ է գնահատում երեխայի ձեռքբերումները:

3.Ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և հմտությունների բարելավմանը:

4.Երեխային տալիս է հնարավորություն ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետը, հիմնախնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ:

5.Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկություն և ժամանակին միջոցներ է կիրառում նրա հիմնախնդիրը լուծելու համար:

Օգուտ ուսուցչին

1.Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ:

2.Նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից:

Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումնական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա:

Օգուտ դպրոցին

1.Դպրոցը ծնողների կողմից ավելի մեծ աջակցություն ունի:

2.Աճում է դպրոցի հեղինակությունը հասարակության մեջ:

3.Դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները ավելի հաջողված են:

4.Այն դպրոցներում, որտեղ աշակերտների հաճախումը շատ ցածր է ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Ծնողի հաջողված ներգրավվածությունը կարելի է հասկանալ որպես ակտիվ կանոնավոր մասնակցությունն իր երեխայի կրթությանը: Այն կարող է լինել տանը, երբ ծնողն օրինակ երեխայի հետ ընթերցում է նյութը, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ուսուցչի հետ, կամավոր մասնակցել դասարանի հարցերում:

Ցավոք սրտի, շատ ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքի ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ ունեն հաղորդակցման պակաս:

Բայց դպրոցի և ընտանիքի միջև երկկողմանի կանոնավոր հաղորդակցումը երեխայի զարգացմանը նպաստող կարևոր գործոններից մեկն է: Դրա համար անհրաժեշտէ, որ ուսուցիչը և ծնողը միմյանց հետ տեղեկություններ փոխանակեն: Շատ լավ հարթակ կարող են օգտագործել դպրոցի կայք էջերը, կամ մշակված օրը: Օրինակ կարելի է կազմակերպել ծնողական ժողովներ և սեմինարներ ինչպես դպրոցում, այնպել էլ այլ վայրերում լարվածությունը թոթափելու համար.

Աղյուսակ 1



Ուսուցիչը պետք է տեղեկացնի ծնողին, թէ ինչ է կատարվում երեխայի կյանքում, խոսեն այն դժվարություններից, որոնք կարող են ազդեցություն գործել դպրոցում երեխայի առաջընթացի վրա:

ԳԼՈՒԽ 1.1 Ծնողների ներգրավվածություն

Ծնողների ներգրավվածությունից ստացված օգուտը պարզ է: Հետազոտությունները ցույց տվեցին, որ ծնողների ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է աշակերտների

վարքն ու հաճախումը, այլև դրականորեն է ազդում աշակերտների ձեռբերումներին: Չնայած սրան, շատ դպրոցներ դեռ փորձում են որոշել և չափել ծնողների գործնական մասնակցությունը և դրանցից շատերը չեն զգում, որ նրանց ջանքերը հաջողություն բերեցին: Ամերիկյան ուսուցիչների վերջին ժամանակներում անցկացրած հարցումների արդյունքում բացահայտվեց, որ նոր մանկավարժների 20 տոկոսը և տնօրենների համարյա մեկ քառորդը ծառայողական սթրեսի կարևոր պատճառը համարում են իրենց՝ ծնողների հետ հարաբերությունները:

ԳԼՈՒԽ 1.2 Ի՞նչ է հաջողված ծնողների ներգրավվածությունը

Ծնողի հաջողված ներգրավվածություն կարելի է հասկանալ որպես ծնողի ակտիվ, կանոնավոր մասնակցություն իր զավակի կրթությանը: Ներգրավվածություն կարող է և տանը լինել, երբ ծնողը երեխաների հետ միասին կարդում է, օգնում է տնային առաջադրանքը կատարելիս և քննարկում է դպրոցի ընթացիկ հարցերը: Որոշ դպրոցներում ծնողը կարող է կամավոր մասնակցություն ունենալ դասարանի գործերում: Նման դպրոցները ծնողների հետ պարբերաբար համագործակցում են և նրանց ներգրավում ուսումնական գործընթացի մեջ:

ԳԼՈՒԽ 1.3 Ի՞նչ է ծնողների ներգրավվածության արգելքը

Հաճախ դպրոցները ծնողներին չեն ներգրավում իրենց գործունեության մեջ, մտածելով, որ նրանք գլուխ չեն հանի դրանից: «Սա արդեն նախնական սխալ կարծիք է: Ուսուցիչները գտնում են, որ ընտանիքները չեն ցանկանում մասնակցություն ունենալ, այնինչ, իրականում ընտանիքները չգիտեն ինչպես մասնակցել» հայտարարեց Կարեն Սալինասը (դպրոցի, ընտանիքի և հասարակության հետ գործընկերության կենտրոնի կապերի տնօրեն, Ջոն Հոպկիսի համալսարան, դպրոցում ծնողների ներգրավվածությանը ամենաազդեցիկ աջակցողներից մեկը):

Իր հերթին ծնողները երբեմն ձեռնպահ են մնում դպրոցի կյանքին ներգրավումից, քանի որ նրանք ազատ ժամանակ քիչ ունեն կամ, որովհետև նրանք լավ չեն խոսում վրացերեն, ինչպես նաև մեծ հիմնախնդիր է հաղորդակցման պակասը դպրոցի և ընտանիքի միջև: Ծնողները գտնում են, որ նրանց դպրոցում սիրով չեն սպասում: Սա, մասնավորապես, հաճախ բացասական փորձի հետևանք է, որը մտածելու տեղիք է տալիս, որ ծնողի ներգրավվածությունը դպրոցական կյանքին դրական արդյունք չի տալիս:

Դպրոցները, որոնք հաջողության են հասել ծնողների ներգրավվածության հարցով, միայն ներգրավվածության պարզ սահմանումների շրջանակներում չեն գործում: Նրանք չեն սահմանափակվում միայն ժողովներին ներկա կամ միջոցառումներին սեփական ցանկությամբ ներգրավված ծնողների հաշվարկներով, ավելորդ քանակով. նրանք ավելորդ կողմնորոշված չենայնպիսի պահանջներին, ինչպիսիք են ծնողի ստորագրությունը աշակերտի տնային առաջադրանքում: Նրանք

հավատում են, որ աշակերտի հաջողությունը դպրոցի և ընտանիքի ընդհանուր հետաքրքրությունն է, ուսման պրոցեսում ծնողին գործընկեր են համարում, իսկ հետագայում այս գործընկերության ուժեղացման կոնկրետ ուղիներն են որոշում: Հաջորդ մասում ծնողների ներգրավվածության ոլորտում եղած հիմնխնդիրների լուծման երեք ճանապարհ է ներկայացված. 1) հաղորդակցման բարելավում, 2) ծնողների ներգրավվածության նշանակության մասին դպրոցի աշխատակազմի և ընտանիքի գիտակցության բարձրացում, և հաղորդակցման բարելավում, 3) անհատականացում:

ԳԼՈՒԽ 2.ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՒԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ծնողների և դպրոցի համագործակցության գլխավոր ձևերից են դասարանական ծնողական ժողովները, որոնք անց են կացնում ուսումնական տարվա ընթացքում: Դասարանական ծնողական ժողովների ընթացքում քննարկվում են դասարանի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման ձևերը, որոշվում դպրոցի և ծնողների համագործակցության ուղղությունները, ամփոփվում տարվա աշխատանքի արդյունքները: Երեխաների առաջադիմության քննարկումը պետք է դառնա ծնողական ժողովների գլխավոր թեման:

Ծնողական ժողովները կարող են լինել՝

- Կազմակերպչական
- Թեմատիկ
- Համադպրոցական և դասարանական
- Ամփոփիչ

Շատ հաճախ ուսուցչի կամ ծնողի սխալ խոսելը, ոչ ճիշտ վարվելակերպը երեխաներին հետ է շպրտում և ստեղծվում է կոնֆլիկտային իրավիճակ, որն ավելի բարդացնում է ծնող-երեխա-մանկավարժ-դպրոց համագործակցությունը: Այդպիսի իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է ճիշտ ծնողական ժողովներ վարել, որտեղ կկարողանանք կառուցողական մթնոլորտ ստեղծել և համատեղ աշխատանքի արդյունքում կշահի մեր սովորողը, վաղվա քաղաքացին: Ծնողական ժողովները պետք է կազմակերպել հետևյալ սկզբունքներով՝

. Ժողովների ժամանակ որոշել մեկ առավել կարևոր խնդիր, որը վերաբերում է դասարանի աշակերտներին և դրա հիման վրա կազմակերպել զրույցը ծնողների հետ:

. Ծնողներին ծանոթացնել մանկավարժական գրականության նորություններին, կազմակերպել կլոր սեղաններ, կինոդիտումներ, այցելել ցուցահանդեսներ և այլն:

. Ժողովի ընթացքում կիրառել խաղեր և ծնողների համագործակցության կազմակերպմանխմբային ձևեր:

. Խնդրահարույց հարցերի քննարկման ժամանակ հենվել առավել կենսափորձ ունեցողծնողների կյանքի և մանկավարժական փորձի, ծնողական կոմիտեի անդամների և դպրոցի խորհրդի կարծիքների վրա:

. Երեխաների ընտանիքների հետ հաղորդակցվելիս դասղեկը պետք է պահպանի մի շարք կանոններ:

. Երեխաների ծնողներին պետք է հարգանքով վերաբերվել, հանել ընդհանուր լարվածությունը:

. Ծնողների հետ հաղորդակցումը պետք է լինի ոչ թե ի վնաս, այլ հօգուտ ի երեխայի:

. Ծնողների հետ հարկավոր է հանգիստ և բարեհամբույր խոսել: Կարևոր է, որ բոլոր աշակերտների, այդ թվում /ռիսկային խմբի/ ծնողները ժողովից գնան հավատով լցված դեպի իրենց երեխան:

. Ծնողական ժողովի ընթացքում համատեղ աշխատանքի արդյունքը պետք է լինի այն, որ ծնողները դառնան ավելի վստահ այն բանում, որ իրենց երեխաների դաստիարակության հարցում կարող են հենվել դասղեկի և մյուս ուսուցիչների աջակցության և օգնության վրա:

Եվ վերջապես ուսուցչի վարպետությունը կայանում է աշակերտների հետ փոխազդեցության կազմակերպման ձևերը, վերլուծելու կարողությունը, համոզմունքների արտահայտումը, առանց վիրավորելու աշակերտի տեսակետը, աշակերտի ներշնչման կարողությունը: Ուսուցչի մոտեցումից շատ բան է կախված: Ուսուցիչն է, որ կարող է ճիշտ ղեկավարելով աշակերտներին և ծնողներին ,

կկարողանա նրանց մեջ ձևավորել բարձր արժանիքներ, զարգացնել հետաքրքրությունը ուսման նկատմամբ:

Ինչպես ասել է Սուխումլինսկին «Յուրաքանչյուր երեխայի մեջ կա լավը, և դաստիարակության գործընթացը պետք է կառուցել դրականի վրա հենվելու սկզբունքի հիման վրա»:

Պետք է խուսափել՝

- նախատել ծնողներին բոլորի ներկայությամբ՝ նախորդ ժողովներին չմասնակցելու համար,
- համեմատել մի աշակերտին մյուսի հետ,
- բացասական գնահատական տալ ողջ դասարանին,
- գերագնահատել որևէ առարկայի դերը,
- խոսել ծնողների հետ բարձր, հրամայական տոնով:

Եվ վերջապես, դասղեկը պետք է լինի անաչառ, բարյացակամ և ունենա մանկավարժական տակտի մեծ զգացում:

ԳԼՈՒԽ 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Յուրաքանչյուր տարիքային խումբ ունի անցումային դժվարություններ, որոնց բախվում ենք բոլորս: Այդ խնդիրներն ավելի ցայտում են երևում 4-5, 6-7, 9-10 դասարաններում, որոնք համարվում են անցումային շրջաններ երեխայի համար, թե' առարկաների տարբերությունների հետ կապված, թե' հոգեբանական և ֆիզիկական փոփոխությունների:

Ես ինքս լինելով 7-րդ դասարանի դասղեկ արդեն իսկ բախվել եմ նմանատիպ խնդիրների, և փորձում եմ այն լուծել ծնողներիս ամենիջական մասնակցությամբ և օժանդակությամբ: Քանի որ այս տարիքում փոխվում է երեխայի ռեժիմը, և մեծանում ֆիզիկական և մտավոր ծանրաբեռնվածությունը, օրգանիզմի հորմոնալ բնականոն ընթացքը, ապա պետք է այդ հարցերին կարևորագույն ուշադրություն դարձնել:

Այդ նպատակով մի քանի անգամ կազմակերպվել են ծնողական ժողովներ, որի օրակարգում քննարկվել են այնպիսի հարցեր ինչպիսիք են նոր առարկաներ, նոր ուսուցիրներ, ինչպես նաև դասղեկ:

Հարցերի քննարկումից հետո, ծնողների կողմից արվեցին շատ հետաքրքիր առաջարկներ, որոնցից են՝

- Օրվա ռեժիմի փոփոխություն
- Զրույցներ երեխաների հետ դեռահասության վերաբերյալ
- Դժվարություններին հարմարվելու ելքեր
- Ներելու և ներողություն խնդրելու ունակություն սերմանելու երեխաների մեջ
- Պատասխանատվության զգացում առաջացնելու երեխաների մեջ

Ավելի մտերմիկ հարաբերություն ստեղծելու համար, դասերից հետո

կազմակերպեցինք զբոսանք գյուղի Ախնաբաթ եկեղեցին, որտեղ խաղացինք տարաբնույթ խաղեր՝ լրացնելով հարցաթերթիկներ:Այս խաղն անվանեցինք <<Անկեղծության զամբյուղ>> որի բնույթը այսպին էր՝ ծնողները և երեխաները միմյանցից առանձին լրացրեցին հարցաթերթիկներ, որոնց մեջ ներառված էին այսպիսի հարցեր.

- սիրելի գույնը
- սիրելի զբաղմունքը
- սիրելի ֆիլմը
- սիրելի ճաշատեսակը
- սիրելի սպորտաձևը
- սիրելի կենդանին
- սիրելի երաժշտությունը

Այս հարցաթերթիկները լրացնելուց հետո գցեցին զամբյուղը, որից հետո համեմատելով ծնողի և երեխայի պատասխանները, պարզվեց թե որքանով են ճանաչում իրար ծնողն ու երեխան:

Նշեմ նաև, որ սկզբում ծնողները կաշկանդված էին, բայց հաղթահարեցին այդ կաշկանդվածությունը, սկսեցին մեծ ոգևորությամբ և առանց կաշկանդվելու ներկայացնել այն, ինչ իրենց հանձնարարված էր:Ուզում եմ ծնողների արտահայտած մտքերից մի քանիսը մեջբերում անել.

«Շատ նոր գիտելիքներ, հմտություններ սովորեցինք»:
«Շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք դասղեկին, ավելի շատ տեղեկացանք նրա և դպրոցի պահանջների մասին»:
«Ճանաչեցինք մեր երեխաներին նորովի» :
«Ծնողներս նաև իրար հետ շփման արդյունքում ավելի լավ ճանաչեցինք միմյանց»:
«Երգելիս, պարելիս, արտասանելիս, սպորտային խաղեր խաղալիս մտովի տեղափոխվեցինք մանկություն»:

«Կուզենայինք այս ծրագիրը շարունակական լիներ»:

Ինչպես նշել է ուկրաինացի մանկավարժ և գրող՝ Անտոն Սեմյոնովիչ Մակարենկոն գոյություն ունի ընտանեական դաստիարակության 10 ոսկյա կանոններ, որոնք պետք է յուրաքանչյուրս պահպանենք: Դրանք են՝

1.Դաստիարաության գործում ամենակարևորը սեփական վարքն է: Մի կարծեք, որ երեխային դաստիարակում եք միայն այն ժամանակ, երբ խոսում եք նրա հետ, կշտամբում կամ հրամայում: Նրան դաստիարակում եք ձեր կյանքի յուրաքանչյուր պահին, նույնիսկ այն ժամանակ, երբ տանը չեք: Ինչպես եք խոսում ուրիշների հետ կամ ուրիշների մասին, ինչպես եք հագնվում, ինչպես եք ուրախանում կամ տխրում, ինչպես եք շփվում բարեկամների կամ թշնամիների հետ, ինչպես եք ծիծաղում, թերթ կարդում. այս ամենը երեխայի համար չափազանց կարևոր նշանակություն ունի: Ձեր խոսելու ձայներանգի նույնիսկ փոքր-ինչ փոփոխությունը երեխան նկատում է կամ զգում, ձեր մտքերը նրան են հասնում անտեսանելի ուղիներով, որը դուք չեք նկատում: Եթե կոպիտ եք կամ պարծենկոտ, կամ հարբեցողությամբ եք զբաղվում, եթե վիրավորում եք նրա մորը, դուք չեք կարող մտածել դաստիարակության մասին: Դուք արդեն դաստիարակում եք ձեր երեխային և այն էլ շատ վատ, և ոչ մի լավագույն խորհուրդ և մեթոդ ձեզ չի կարող օգնել:

2.Երեխաներին դաստիարակելիս պետք է լուրջ, պարզ ու անկեղծ ձայներանգ Այս երեք հատկանիշները արտացոլելու են ձեր կյանքի ճշմարտությունը: Իսկ լուրջ լինել չի նշանակում, որ դուք պետք է միշտ անհասանելի և գոռոզ լինեք: Պարզապես եղեք անկեղծ, թող ձեր տրամադրությունը համապատասխանի ձեր ընտանիքում կատարվածի էությանը և պահին:

3.Յուրաքանչյուր ծնող պետք է լավ պատկերացնի, թե ինչ են ուզում դաստիարակել իր երեխայի մեջ, պետք է հաշվետու լինել սեփական ծնողական ցանկությունների մեջ: Մտածեք այս հարցի շուրջ, և կնկատեք ձեր կողմից կատարված և շատ սխալները, և առջևում շատ ճիշտ ուղիներ:

4. Տեղյակ եղեք, թե ինչ է անում ձեր երեխան, որտեղ է և ովքեր են նրան շրջապատում, սակայն պետք է նրան անհրաժեշտ ազատություն տալ, որպեսզի նա ոչ միայն ձեր ազդեցության տակ գտնվի, այլ նաև կյանքի բազմաթիվ և բազմազան այլ ազդեցությունների: Պետք է երեխայի մեջ զարգացնել օտար և վատ մարդկանց ու հանգամանքները հասկանալու ունակություն, պայքարել նրանց հետ, դրանք ժամանակին ճանաչել: Ջերմոցային դաստիարակության ժամանակ հնարավոր չէ դա զարգացնել:

5.Դաստիրակչական աշխատանքը նախ և առաջ կազմակերպիչի աշխատանք է: Այս հարցում մանրուքներ չկան: Լավ կազմակերպված աշխատանքը հենց լավն է կոչվում այն պատճառով, որ տեսադաշտից ոչ մի մանրուք բաց չի թողնվում: Մանրուքներն

ազդում են կանոնավոր, ամեն օր, ամեն ժամ, որով էլ ձևավորվում է կյանքը։ Դաստիարակելու համար ոչ թ շատ ժամանակ է հարկավոր, այլ քիչ ժամանակը խելացի օգտագործելու հմտություն։

6.Մի պարտադրեք ձեր օգնությունը, բայց միշտ պատրաստ եղեք օգնել Ծնողի օգնությունը չպետք է լինի պարտադրող, հոգնեցնող և ձանձրացնող։ Երբեմն հարկավոր է երեխային հնարավորություն տալ ինքնուրույն հաղթահարել դժվարությունը, որպեսզի կարողանա էլ ավելի բարդ հարցեր լուծել։ Միևնույն ժամանակ պետք է հետևել, թե ինչպես է երեխան որևէ հարց լուծում, չի կարելի թույլ տալ, որ նա խճճվի և հիասթափվի։ Երբեմն նույնիսկ անհրաժեշտ է, որ նա զգա ձեր զգոնությունը, ուշադրությունը և ձեր վստահությունը իր նկատմամբ։

7.Մի վճարեք և մի պատժեք աշխատանքի արդյունքի համար։ Ես խորհուրդ չեմ տալիս աշխատանքի մեջ խթանել կամ պատժել։ Աշխատանքային խնդիրը և այն լուծելու ուղիները պետք է երեխային այնպիսի հաճույք պատճառեն, որ նա ուրախանա։ Նրա համար նման պարգև կլինի, եթե նա ձեր հավանությունը ստանա իր հնարամտության և աշխատելու ձևի համար։ Սակայն կատարած աշխատանքի համար չի կարելի նրան գովաբանել ձեր ծանոթների և ընկերների մոտ։ Առավել ևս չի կարելի պատժել չարած և վատ կատարած աշխատանքի համար։ Այստեղ ամենակարևորն այն է, որ այդ աշխատանքը այնուամենայնիվ արվի։

8. Հնարավոր չէ առանց մարդկային արժանապատվություն սերմանելու երեխային սիրել սովորեցնել։ Սովորեցնել սիրել, ճանաչել սերը, լինել երջանիկ. դա նշանակում է ճանաչել ինքդ քեզ, լինել արժանապատիվ։

9.Երբեք զոհի դերում չլինել։ Սովորաբար ծնողներն ասում են, որ իրենք ամեն ինչ կտան երեխային, իրենց երջանկությունը կզոհաբերեն հանուն նրա։ Սա ծնողներ կողմից արված ամենասարսափելի նվերն է։ Դա այնպիսի սարսափելի նվեր է, որ կարելի է խորհուրդ տալ. եթե ուզում եք երեխային թունավորել, տվեք նրան ձեր սեփական երջանկության մեծ չափաբաժինը, և նա կթունավորվի։

10. Հնարավոր չէ մարդուն սովորեցնել երջանիկ լինել, բայց դաստիարակել այնպես, ոչ նա երջանիկ լինի, կարելի է։

Եվ վերջում ևս մեկ հրաշալի մեջբերում վարպետից. «Սերը ամենամեծագույն զգացմունքն է, որը հրաշքներ է կատարում, որը նոր մարդ է ձևավորում և մեծագույն մարդկային արժեքներ է ստեղծում>>։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, հիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած մեր պնդումները՝ եկանք այն եզրակացությանը, որ ուսուցիչն առանցքային դերակատարում ունի սովորողների կրթության ու դաստիարակության գործընթացում սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին ներգրավելու առումով: Այդ նպատակով ուսուցիչը պետք է համագործակցային հարաբերություններ ստեղծի ոչ միայն ծնողի կամ օրինական ներկայացուցչիչների, այլ նաև մանկավարժական աշխատողների հետ: Ուսուցիչը պարտավոր է սովորողի զարգացման ընթացքի մասին տեղեկություն տալ սովորողի ծնողին կամ օրինական ներկայացուցչին: Նրանք այդ հարցի շուրջ պետք է միասնական որոշում ընդունեն: Դրան, ինչպես հասկացանք, մեծ դեր ու նշանակություն ունեն ծնողական ժողովները, որի ընթացքում քննարկվում են առկա խնդիրներն ու տալիս այդ խնդիրներին միասնական և դրական լուծում:

Այդ եռամիասնության հիմքում պետք է դրվեն բացառապես սովորողի շահերը: Այս համագործակցությունը պետք է հիմնված լինի մարդկային բարձր ու բարոյական որակների վրա: Այստեղ չի կարելի ստորադասել որևէ կողմի գործառույթները: Մենք պետք է փորձենք ծնողներին վստահություն տալ, որ որակյալ ուսուցիչները կսովորեցնեն և կկրթեն իրենց երեխային և, որ դրա համար պատրաստ են բոլոր անհրաժեշտ պայմանները:

Ուսուցիչները և ծնողները ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության երեխայի կյանքը լիարժեք չէ: Որովհետև դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք, իսկ ընտանիքն ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում է ձևավորվում և մշակվում մարդկանց կարեկցելու կարողությունը:

Մանկավարժությունը պետք է դառնա գիտություն և՛ ուսուցիչների, և՛ ծնողների համար, ուստի կարևոր և հրատապ խնդիրներից է դպրոց-ընտանիք համագործակցությունը: Ուսունասիրության արդիականության հիման վրա բերենք հետևյալ առաջարկությունները:

Հաշվի առնելով կրթական համակարգի պահանջները ու սովորողների հետաքրքրություններն ու պահանջմունքները, կարծում ենք, որ ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար սովորողի ծնողը կամ օրինական ներկայացուցիչը պետք է հնարավորություն ստանա էլ ավելի շատ տեղեկություններ ունենալու այն մասին, թե ինչով է զբաղվում իր երեխան դպրոցում արտադասարանական կամ արտադպրոցական միջոցառումների ժամանակ, ինչ հետաքրքրություններ ու նախասիրություններ ունի:

Աշակերտները պետք է քաջալերվեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ծնողների կողմից: Գաղտնիք չէ, որ դեռահասները հաճախ են խնդիրներ ունենում համացանցի հասանելիության, կիբեռխնդիրներ և այլն, որոնք շատ վտանգավոր կարող են լինել: Ծնողը պետք է իրազեկված լինի ուսուցչի (դասղեկի) կողմից: Այսպիսով ծնողը և ուսուցիչը վստահ կլինեն, որ իրավիճակը վերահսկելի է:

Ամփոփելով վերը նշված դրույթները մեր խոսքն ավարտենք Ա.Ս. Մակարենկոյի» խոսքերով <<Մեր երեխաները մեր ծերությունն են: Ճիշտ դաստիարակությունը մեր ծերությունն է, վատ դաստիարակությունը՝ մեր ապագա վիշտը, մեր արտասուքները: Դա մեր հանցանքն է մյուս մարդկանց առջև, ամբողջ երկրի առջև>>:

Ուրեմն կարողանանք ձևավորել կյանքի լայն իմացություն և տաղանդ, կարողանանք ճիշտ դաստիարակության միջոցով դաստիարակել և կերտել երկրի, ինչու չէ, նաև աշխարհի ապագա պատմությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ռ. Մուրադյան, Դասղեկ (մեթոդական ձեռնարկ), <<Գիտություն>> հրատարակչություն, Երևան 2007
2. Նախաշավիղ 5-6. 2001
3. Նախաշավիղ 1. 2012
4. Торнадайк Э., Принципи обученное на психологии, М. 1930
5. https://lib.armedu.am/files/resource/files/2022-08-16/4a6e403658c2cf24acdaab66660314fa.pdf
6. http://kargiskola.ge/parent/pdf/PE_GUIDE_Armenian.pdf
7. https://lib.armedu.am/article/6671
8. https://shabat.am/am/article/107353/-Yntaneakan-dastiarakutyan-10-oskya